



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵՃՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1 (58)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2021

**ԲԱԶՄԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԴԵՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ
ՇՈՒՐՋ**

ՄԱՆԱՆ ԱՂԱԲԵԿՅԱՆ

***Հիմնաբառեր՝** բազմախոսություն, մասնակիցների դերեր, առաջնորդ, մեկնաբանողներ, կոնֆլիկտային բազմախոսություններ, համագործակցային բազմախոսություններ*

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել և վերլուծել բազմախոսությունների դերային կառուցվածքի վերաբերյալ առկա մոտեցումները, ինչպես նաև առաջարկել բազմախոսություններում դերերի բաշխման կադապար՝ հիմնվելով բրիտանական հասարակական-քաղաքական բնույթի թոք-շոուների վրա:

Ներկայումս դիտվում է երկկողմ և բազմակողմ հաղորդակցման սկզբունքային տարանջատմանն ուղղված դրական միտում: Մինչև վերջերս գերիշխում էր այն տեսակետը, որ բազմախոսությունն ընդամենը երկխոսությունների պարզ համագումար է: Ինչպես նշում է Է. Յակոլևան՝ խոսքի տեսակների սահմանման դժվարությունները կապված են հիբրիդային ձևերի գոյության հետ (Яковлева 2007: 185):

Մասնագիտական գրականության մեջ բազմախոսության զանազան կողմերին անդրադառնալիս մանրամասն ուսումնասիրվել են երկխոսության և բազմախոսության առանձնահատկություններին: Ուսումնասիրողները, ի թիվս այլ հատկանիշների, դիտարկել են բազմախոսությունների տեսակները և դրանց դասակարգումը, բազմախոսություններում հասցեագրումների տեսակները, մասնակիցների դերային բաշխումը: Վերջինս առավել հետաքրքրական է այն տեսանկյունից, որ փոխկապակցված է բազմախոսության զարգացման ընթացքի, դրա հանգուցալուծման, քննարկման ընդհանուր ուղղվածության, համագործակցային կամ կոնֆլիկտային բնույթի հետ:

Հաշվի առնելով թոք-շոուների բազմախոսական բնույթը՝ մասնակիցների դերային բաշխումը այստեղ ստանում է հետաքրքիր բնութագիր: Այս մոտեցումը, որ բազմախոսությունները խոսքային հաղորդակցման երրորդ ձևն են՝ մենախոսությունների և երկխոսությունների հետ մեկտեղ, ձեռք է բերում կարևորություն՝ հիմնված մի շարք էական փաստարկների վրա, մասնավորապես՝

բազմախոսությունները բնութագրվում են երկխոսություններից տարբեր հետևյալ արտալեզվական հատկանիշներով՝

- թեմատիկ բազմազանությունը,
- ասույթների փոխկապակցվածության ավելի բարդ բնույթը,
- ասույթների հասցեագրման առանձնահատկությունները,
- մասնակիցների հասարակական կարգավիճակի անհամաչափությունը,
- հաղորդակցական կարծրատիպերի առանձնահատկությունները,
- մասնակիցների քանակական առավելությունը երկխոսության նկատմամբ,
- մասնակիցների քանակի անսահմանփակ լինելը,
- միջանձնային հարաբերությունների բնույթը,
- մասնակիցների դերերի քանակական և որակական տարբերությունները:

Բազմախոսությունների ուսումնասիրությունը կապված է գրավոր խոսքում ժանրային ուսումնասիրությունների հետ: Այնուամենայնիվ, ի սկզբանե լեզվաբանների ուսումնասիրությունների ուշադրությունը գրավեց երևույթի հնչյունային կողմը: Դարին բնորոշ բազմակողմանի հաղորդակցման տեսակների ընդարձակման շրջանակում բազմախոսությունները լայն տարածում գտան, օրինակ՝ սոցցանցային հաղորդակցման ոլորտում, կլոր-սեղան քննարկումներում, վիրտուալ սեմինարներում, հեռուստաբանավեճերում, թոք-շոուներում և այլն:

Բազմախոսությունների վերլուծության ներկա փուլում դիտվում է ժանրային առանձնահատկությունների վերհանման միտում: Այսպես, Մ. Մակովեցկայան դիտարկում է դրանք պաշտոնական խոսակցություններում (Маковецкая 2012), Լ. Չիտախովան՝ ֆրանսերեն պիեսներում (Читахова 2001), Է. Յակովլևան՝ գերմաներեն հանպատրաստից խոսքում (Яковлева 2004) և այլն: Վերջին տարիներին փորձեր են արվում նաև ուսումնասիրել քաղաքական ոճի առանձին ժանրեր: Այսպես, օրինակ, Մ. Սեյրանյանը դիտարկել է բրիտանական խորհրդարանական բանավեճերը: Հեղինակը կենտրոնացել է կոնֆլիկտային քաղաքական խոսույթի և հատկապես դրա հնչյունային առանձնահատկությունների վրա (Сейранян 2016): Սակայն դեռևս բաց է քաղաքական խոսույթում բազմախոսությունների համապարփակ վերլուծությունը:

Կանխորոշված լինելով քանակական գործոնով՝ խոսքային ակտի մասնակիցների դերերը մեծ կարևորություն ունեն խոսքային ակտի լեզվական ձևավորման մեջ: Անդրադառնալով վերջին կետին՝

անհրաժեշտ է նշել, որ կախված բազմախոսության մասնակիցների քանակից և նրանց միջև փոխհարաբերության բնույթից՝ վերջիններս կարող են ստանձնել տարբեր դերեր:

Հետաքրքրական է նշել, որ դերերի սահմանափակումն հարցում տարատեսակ են մոտեցումները և, հետևաբար, նաև այդ մոտեցումների հիման վրա առանձնացված դերերը:

Դերը սահմանելիս կարևորվում են տարբեր գործոններ, ինչպիսիք են՝ մասնակիցների **հոգեբանական տեսակները, նրանց փոխազդեցության բնույթը, հաղորդակցական ռազմավարությունների և մարտավարությունների ընտրությունը՝ կախված փոխազդեցության բնույթից:** Փաստորեն, «խոսույթի մասնակիցների անձնային կարգավիճակի» գործոնը բազմախոսական ուսումնասիրություններում նկարագրում են՝ հաշվի առնելով հոգեբանական, կարգավիճակային, դերային և անձնային հատկանիշները (Маковецкая 2012): Համաձայն Մ. Մակովցեկայայի, որը ուսումնասիրել է հնչերանգի դերը խմբային հաղորդակցության ժամանակ, խմբային հաղորդակցության առանձնահատկություններից է նպատակի հստակ սահմանումը, ինչը հնարավորություն է ընձեռում արդյունավետ կերպով կազմակերպել ռազմավարությունները և մարտավարությունները, ինչի շնորհիվ էլ բարձրացնել ընդունվող որոշումների որակը: Սրա հետևանքով, յուրաքանչյուր հաղորդակից շփման մեջ է մտնում սեփական նպատակներով, և խոսույթի վերջնարդյունքը կախված է խոսույթի մասնակիցների առանձնահատկություններից:

Եթե դիտարկենք հոգեբանական առանձնահատկությունները, ապա պետք է նշել, որ դրանք էականապես ազդում են մասնակիցների վարքի վրա: Կախված բազմախոսության դրվածքի տեսակից՝ առաջարկվում է մասնակիցների հետևյալ տիպաբանությունը՝ համագործակցային և կոնֆլիկտային: Առաջինը ենթադրում է պահվածքի համակերպվող ոճ, պասիվ, համակերպվող տիպի հաղորդակից. կոնֆլիկտային և հակամարտության դրվածքի դեպքում դիտվում է հաղորդակցի կոնֆլիկտային տարատեսակը (Маковецкая 2012, Читахова 2001:70, Науменко 2012):

Համագործակցային մարտավարությունների շարքում դիտարկվում են նախաձեռնության հավասարաչափ բաշխումը, կոնֆլիկտից խուսափելը, համախմբվածությունը:

Կոնֆլիկտային մարտավարությունների շարքում կարևորվում են նախաձեռնության չարաշահումը, ճնշումը կամ շահարկումը: Այս առումով նշանավորվում է **առաջնորդի դերը**, այսինքն՝ նրանից է մեծամասամբ

կախված, թե արդյո՞ք բազմախոսությունը կլինի կոնֆլիկտային, թե համագործակցային (Маковецкая 2012):

Բազմախոսությունների տարատեսակ եռախոսությունների դիտարկման ժամանակ կարևորություն են ստանում հաղորդակցման երրորդ մասնակցի դերային դրսևորումները: Այս առումով, դիտարկելով երրորդ մասնակցի գործոնը, հետաքրքրական է դիտել կոնֆլիկտային հաղորդակցումը: Նման դեպքերում երրորդ անձը կարող է լինել *չեզոքություն պահպանող, հրահրող, կոնֆլիկտի լուծման միջնորդ, փոքրամասնություն ներկայացնող ընդդիմախոս*: Այս դերերից յուրաքանչյուրը ենթադրում է եռախոսություններում համապատասխան մարտավարությունների ընտրություն: Հրահրողը իր մարտավարություններն իրականացնում է՝ հանգեցնելով երկու մասնակիցների շահերի բախմանը: Եթե երրորդ մասնակիցը պահպանում է չեզոքություն, ապա դա պարտադրում է մյուս երկուսին իրականացնել ընդդիմախոսի հեղինակագրկման կամ համախոհի ձեռքբերման մարտավարություն, այդ թվում նաև՝ հեղինակությամբ դիմելու միջոցով: Միջնորդը ագրեսորի խղճին է փորձում ազդել՝ բացատրելով ագրեսիայի պատճառը, հակամարտող կողմերից մեկի պարտականություններն իր վրա վերցնելով, նաև ներողություն խնդրելով մասնակիցներից մեկի փոխարեն (Haymenko 2012: 5-6): Լ. Չիտախովան եռախոսությունների ուսումնասիրության մեջ առաջարկում է երրորդ մասնակցի հետևյալ դերերը՝

1. միջնորդ, խաղաղարար,
2. առիթից օգտվող,
3. բռնապետ կամ հրահրող (Читахова 2001):

Բազմախոսությունների մասնակիցների դասակարգման առավել պարզեցված մոտեցում կա Ս. Կրուգլովայի մոտ, որն առաջարկում է հետևյալ բաժանումը՝ այն մասնակիցները, որոնց խոսքը բովանդակային է՝ համարվում են ակտիվ, իսկ նրանք, ում խոսքը բովանդակային չէ՝ պասիվ: Դիտողությունների քանակը այս պարագայում որոշիչ հանգամանք չէ: Եթե բազմախոսությունում առկա է վարող, ապա նրա խոսքն ակտիվ է (Круглова 1997):

Այս մոտեցումը չենք համարում սպառիչ, քանի որ խոսքի բովանդակային լինելը ոչ միշտ է կարելի օբյեկտիվորեն որոշել, և մասնակիցների ներդրումը բազմախոսության զարգացման գործում չի որոշվում քանակական չափանիշով:

Գոյություն ունեն նաև բազմախոսությունների մասնակիցների դասակարգման այլ սկզբունքներ՝ հիմնված լսողների դերերի վրա:

Հետաքրքրական է լսողների առանձնացումը երկու խմբի՝ վավերացված կամ պաշտոնական և չվավերացված կամ ոչ պաշտոնական: Վավերացված լսողն ունի իրավունք լսելու՝ ի տարբերություն ոչ վավերացված լսողի: Նրանց մեջ առանձնացնում են հասցեագրված հասցեատիրոջը, ում խոսքն ուղղված է և ում պատասխանն ակնկալվում է, և պաշտոնական լսողներին, ում խոսքը չի հասցեագրվում (Goffman 1981a [1976]:9, 1981c [1979]:133), Dynel 2010:6): Ի՞նչ Գոֆմանը հետազայում նաև ավելացնում է ականայից լսողի և գաղտնալսողի տարանջատման ևս մեկ չափանիշ, այն է՝ արդյո՞ք խոսողն ուզում է, որ իրեն լսեն, թե՞ ոչ:

Ալան Բելը զարգացնում է Ի. Գոֆմանի մոտեցումը՝ առանձնացնելով լսարանի հետևյալ դերերը՝ հասցեատեր (ճանաչված լսող, վավերացված և հասցեագրված), լսող (ճանաչված և վավերացված, բայց ոչ հասցեագրված), ականայից լսող (չվավերացված լսող, ում գոյության մասին խոսողն իրազեկ է) և գաղտնալսող (չվավերացված լսող, ում ներկայության մասին տեղյակ չեն, ով վավերացված չէ և լսում է խոսողներին պատահաբար կամ նպատակադրված): Փաստորեն, վերջին երկու խմբերի առանձնացումը հիմնված է խոսողի տեղյակ լինելու փաստի վրա՝ արդյո՞ք նա գիտի, որ իրեն լսում են, թե՞ ոչ: Նա նաև առանձնացում է ծանոթ ականայից լսող և անծանոթ ականայից լսող ենթաբաժանումը: (Bell 1991) Այս ստորաբաժանումը հիմնված է այն սկզբունքի վրա, թե արդյո՞ք հանդիսատեսը հասցեագրված է, վավերացված կամ ճանաչված (Bell 1984: 159): Ա. Բելը նշում է, որ երրորդ անձը, որը վավերացված է՝ որպես խոսակցության մասնակից, լսող է կամ աուդիտոր, իսկ նա, ով ներկա է, բայց վավերացված չէ, ականայից լսող է (Bell 1984: 172):

Բազմախոսությունների մասնակիցների դասակարգման առավել համապարփակ տարբերակ է առաջարկել Մ. Դայնելը, ով դիտարկել է հիմնականում սիթքում կինոխոսույթը: Նա նշում է, որ ընդունված խոսող-լսող երկատումը չի արտացոլում հաղորդակցության էությունը, քանի որ այն հիմնված է ոչ թե երկխոսությունների, այլ բազմախոսությունների վրա, այսինքն՝ մի խոսակցություն, որում կան ավելի քան երկու խոսակիցներ: Հեղինակը առաջարկում է խոսող-լսող կարգի դասակարգումը բազմաթիվ կողմեր պարունակող խոսակցություններում՝ հիմնվելով մի շարք սկզբունքների վրա (Dynel 2010: 1):

Մ.Դայնելը, խոսող-լսող փոխհարաբերություններին անդրադառնալիս նշում է, որ երկակի խոսակցությունների դեպքում խոսողը կարիք չունի ընտրել իր հասցեատիրոջը, որը, միևնույնն է,


դառնալու է հաջորդ խոսողը, քանի որ խոսակիցը ենթադրում է, որ նա պետք է ստանձնի խոսելու հերթը: Սակայն, երբ կան բազմաթիվ խոսողներ, նման իրավիճակը երախշավորված չէ՝ անկախ այն փաստից, որ խոսողը հասցեագրում է մեկ կամ մի քանի խոսողների միաժամանակ: Պատասխանելու իրավունքը կարող է լինել սխալ, եթե հասցեատերը խմբային է և չի կարող պատասխանել միաժամանակ: Խոսակցության երրորդ մասնակիցը կարող է մասնակցել խոսակցությանը նույն հիմքով, ինչ հիմնական հասցեատերը, նույնիսկ եթե խոսքն ուղղված է մեկ այլ անհատի (Dyner 2010: 11):

Ի. Գոֆմանի, հետազայում նաև Ա. Բելի և Մ. Դայնելի՝ վավերացված կամ չվավերացված լսողների բաժանումը չենք կարող կիրառելի համարել հասարակական-քաղաքական և ինտելեկտուալ թոք-շոունների մեծ մասի համար: Նմանատիպ հաղորդումներում հրավիրված յուրաքանչյուր մասնակից ունի լսելու իրավունք, քանի որ այս ձևաչափով շփման ժամանակ մասնակիցներին տրվում է հավասար իրավունք՝ մասնակցել խոսակցությանը և լսել մյուս մասնակիցների խոսքը: Առավել ևս այս պարագայում չենք կարող որևէ մասնակցի համարել ակամայից լսող կամ գաղտնալսող, քանի որ թոք-շոուններում մասնակիցները ցանկանում են իրենց խոսքը հասանելի դարձնել մյուսներին և համոզել, որ իրենց տեսակետն է ընդունելի: Եվ այսպես՝ տվյալ դեպքում մենք գործ ունենք միայն վավերացված մասնակիցների հետ:

Ա. Բելի դասակարգման պարագայում հասցեատիրոջ (ճանաչված լսող, վավերացված և հասցեագրված) և լսողի (ճանաչված և վավերացված, բայց ոչ հասցեագրված) բաժանումը հիմնականում կարելի է կիրառելի համարել ժամանցային թոք-շոունների համար, քանի որ հասցեատիրոջ դերում հանդես են գալիս հաղորդավարը և հյուրերը, իսկ լսողի դերում՝ հեռուստադիտողը: Մասնակիցները տեղյակ են, որ հեռուստադիտողները լսում են բազմախոսությունը, սակայն «ֆիզիկական» մասնակցություն չեն ունենում հաղորդակցությանը: Մինչդեռ գաղտնալսողի դերը կարող ենք բացառել: Ստուդիայում հանդիսատեսների մասնակցության պարագայում հնարավոր է դիտել վավերացված և չվավերացված լսողների գոյության հնարավորությունը, իսկ այն թոք-շոուի պարագայում, որի ժամանակ մասնակցում են միայն հյուրերը և հաղորդավարը, դերերի բաշխումը հիմնվում է այլ հանգամանքների վրա, ինչպիսիք են հեղինակությունը, կարգավիճակը և հաղորդակցման նպատակը:


Դերային փոխհարաբերությունները տարբեր աշխատություններում ներկայացվում են երկու տիպի կառուցվածքով՝ դերային դաշտ և

խնդրային-դերային դաշտ՝ կառավարման երկու ձևով՝ առաջնորդային՝ մոդերատորի կողմից կառավարվող և խնդրային (Яковлева 2007:194): Չնայած այն փաստին, որ Է. Յակովլևան դիտում է մոդերատորին՝ որպես մշտապես ակտիվ մասնակից, այսպես կոչված կատալիզատոր, որը կարող է կանխորոշել գրույցի ընթացքը, տանել այն այլ ուղղությամբ, ապահովել կազմակերպված հաղորդակցում, սակայն մեր ուսումնասիրությունների կորպուսում դիտվում են բազմախոսություններ, որտեղ մոդերատորի դերը արտահայտված է տարբեր աստիճանի ակտիվությամբ: Վերլուծված հասարակական-քաղաքական բնույթի թոք-շոուներում մոդերատորների ներգրավվածությունը ակնհայտորեն տարբեր է, ինչը կարելի է պատկերել հետևյալ կերպ՝



Բացի առաջնորդներից և պասիվ լսողներից հաղորդակցման մյուս մասնակիցներին կարելի է համարել *մեկնաբանողներ*: Սովորաբար մեկնաբանողներին նկարագրելիս որոշ մասնագետներ որդեգրում են դերային սահմանազատման գծային մոտեցում՝ պարզապես թվարկելով հնարավոր մասնակիցներին (օրինակ՝ խաղարար, ամբողջ խմբի կարծիքն արտահայտող, գնահատող, շտկող, համառոտագրող, ինքնակոչ միջամտող, խոսակցությունը պահպանող (Читахова 2001, Хауменко 2012), վավերացված լսողներ (Goffman 1976, Bell 1984, Dynel 2010 և այլք): Կա նաև դերային բաշխման կառուցվածքային մոտեցում, ինչպես, օրինակ, վերևում նշված՝ Է. Յակովլևայի մոտեցումը:

Մեր ուսումնասիրած բազմախոսական հասարակական-քաղաքական թոք-շոուներում, հիմնվելով մասնակիցների սոցիալական կարգավիճակի, փոխհարաբերությունների և նպատակների վրա, դերային կառուցվածքը կարելի է ներկայացնել հետևյալ սխեմայի տեսքով՝




Ինչպես կարելի է նկատել, ամենաակնհայտ հակադրությունը, ըստ էության, առաջնորդի և մեկնաբանողների հակադրություն է, ինչն իր արտացոլումն է գտնում մասնակիցների խոսքի նաև հնչյունական կողմում:

Կոնֆլիկտային բազմախոսության օրինակ կարող է դիտարկվել BBC հեռուստաընկերության *Newsnight* ծրագրի 2011թ.-ի *England Riots: The Whites Have Become Black* հաղորդումը՝ նվիրված Լոնդոնում բռնկված ցույցերին և դրանց հետևանքներին: Հաղորդման մասնակիցներն են հաղորդավար Էմիլի Մեյթլիսը, որը հանդես է գալիս չեզոքություն պահպանող մոդերատորի դերում, պատմաբան Դեյվիդ Սթարքին, որը ստանձնում է սուբյեկտիվ առաջնորդի դերը՝ փորձելով բազմախոսությունը ուղղել իր համար նախընտրելի ընթացքով, ինչպես նաև *Chavs* գրքի հեղինակ Օուեն Ջոնսը և հեղինակ ու հեռարձակող Դրիդա Սեյ Միթչելը, որոնց կարելի է համարել հակադրվող մեկնաբանողներ:

Քննարկվող թեման դրդում է մասնակիցներին արտահայտել կտրուկ և իրարամերժ կարծիքներ: Հաճախ կարելի է դիտել ընդհատումներ և զուգահեռ խոսք: Հաշվի առնելով թեմայի կարևորությունը՝ այստեղ չկան պասիվ լսողներ:

Դերերի սահմանազատումը ավելի հստակ պատկերելու նպատակով դիտարկենք մասնակիցների խոսքի որոշ հատվածների ավտոսեգմենտային վերլուծությունը:

Դիտենք հետևյալ օրինակները




D. Starkey: A 'particular 'sort of 'violent, |des' 'tructive, | and a 'nihil'istic 'gangster 'culture |has be'come → the 'fashion. (առաջնորդ)

Ինչպես երևում է կոմպյուտերագրամից, առաջնորդը իր խոսքում հաճախ կիրառում է բարձր վարընթաց տոներ, ասույթային շեշտեր, հուզական շեշտեր, խախտվող սանդղակ և այլն՝ նպատակ ունենալով խոսքը դարձնել հեղինակավոր և համոզիչ: Ռիթմը դանդաղ է՝ առանց կտրուկ արագացումների:

D. Starkey: 'That's not 'true. ''What's 'happened is 'black 'culture... 'this is an en↑ormously imp'ortant \ thing. |It's 'not 'skin colour. It's 'culture. |Listen to ||David 'Lammy, |an 'archet'ypical succ'essful 'black \ man. |If you 'turn the ''screen 'off,| so you're 'listening to him on the ,radio, |you'd think he was \ white.

Ինչ վերաբերում է մեկնաբանողներին, ապա կրկին կարելի է դիտել բարձր վարընթաց տոներ, հավասար տոներ, սահող սանդղակ և այլն:



O. Jones: 'What you're 'doing is you're e'quating 'black 'culture with 'crimin'ality.

D.-S. Mitchell: 'David, David, a 'bsolu^{te}tely, uhm... abso'lutely / 'not at 'all / 'really. / You → know, / of 'all the 'theories we've 'heard ~this, this, week, /this 'whole 'notion /that this is 'down to the 'way/ that 'some young ,people /may 'choose to ,speak, / that 'people, I sup,pose, ...

Բազմախոսություններում մասնակիցների դերերն ուսումնասիրելու նպատակով դիտարկել ենք նաև *Dateline London* թոք-շոուի 2015թ.-ի ապրիլի 25-ի հաղորդումը, որի մի մասը նվիրված է հայոց ցեղասպանությանը: Այս բազմախոսության մեջ ներգրավված է հինգ մասնակից՝ հաղորդավար Գեվին Էսլերը և հյուրերը՝ Նաբիլա Ռամդանին՝ ավփրոցի գրող և լրագրող, Մարկ Ռոշը *Le Soir* թերթից, Սաֆակ Թիմուրը *BBC*-ի թուրքական ծառայությունից և Դեյվիդ Աարոնովիչը *The Times* թերթից:


Հաղորդավարը տվյալ դեպքում, պահպանելով չեզոքություն, կազմակերպում է հաղորդակցման ողջ գործընթացը, տալիս է դրան զարգացման որոշակի ուղղություն՝ հարցերի կամ դիտողությունների միջոցով: Մյուս մասնակիցները հաղորդակցման մեջ ներգրավվում են հաղորդավարի հրավերով, երբ վերջինս խոսքն ուղղում է նրանցից որևէ մեկին: Մասնակիցները, կախված քննարկման թեմայի վերաբերյալ իրենց մոտեցումից, կարող են համագործակցել կամ հանդես գալ որպես կոնֆլիկտային շփման հակառակ կողմեր: Առաջնային հասցեատերերը հաղորդակցման տարբեր փուլերում փոփոխվում են, սակայն հաղորդակցման բոլոր մասնակիցները համարվում են հասցեատերեր:

Քննարկման թեմայի՝ հայոց ցեղասպանության մասին խոսելիս մասնակիցները փորձում են լինել զգուշավոր, այդ պատճառով նույնիսկ դիմացինի խոսքին հակադրվելիս ոչ մի մասնակից չի առանձնանում իր հեղինակությամբ: Այսպիսով՝ քննարկման ժամանակ մասնակիցները խուսափում են կտրուկ խոսքերից:

D. Aaronovich: It's a 'really good ,question, Gavin. 'Cause you ,said, ,look at it. I →mean in terms of defi'nition of ,genocide, it 'was a 'genocide. Uhm... and the Ar'menian 'population of the 'Ottoman 'Empire |,went from 'anywhere between '1.5 and 2 million... uh... to 'what is 'Turkey, which is a 'smaller 'entity to'day of a'bout '7'5.000 Ar'menians. So you can 'see what the 'consequences of it were...→And 'up to a 'million 'people, | 'some people 'say 'more, | 'lost their 'lives. 'Now 'whether it wasn't an in'dustrial 'Holocaust of the 'kind of...of the 'final so'lution of 'Jews was sup'posed to be in 'Europe, |but it 'certainly 'was ...uh...by... by 'modern 'standards a 'genocide.

G. Esler: → D'you...'D'you →think/ the 'word 'genocide... uh.../ 'clearly 'matters /to 'some 'people.../but 'd'you 'think, | 'given the 'facts,

the 'facts are... it was hor'rific, | 'whether we 'call it →slaughter, | 'mass →murder, | 'genocide, does... 'does that 'matter?



Ինչպես նկատելի է կոմպյուտերոգրամում, հաղորդավարը հիմնականում գործածում է հավասար և բարձր վարընթաց տոներ: Հաճախակի են դադարները և տատանումները:

Հաղորդակցություն

ներ տվյալ դեպքում դժվար է համարել կոնֆլիկտային կամ համագործակցային, քանի որ, չնայած այն փաստին, որ երեք մասնակից հակադրվում են մեկին, նրանք չեն անցնում կոնֆլիկտային շփման, այլ տեսակետներն արտահայտում են՝ դիմացինի կարծիքի նկատմամբ հարգանք ցուցաբերելով:

N. Ramdani: I 'think| 'people aren't 'qualified to make 'sweeping 'statements| about hi'storical 'blame, | and it's actually a very 'dangerous 'thing to do as 'well. I →mean |'19'15 was a 'time when the 'world was ex'ploding |and people were 'massacring 'each 'other in 'huge 'numbers.

Թոք-շոուներում ժամանակի սղության պատճառով մասնակիցներին հատկացված խոսելաժամանակը քիչ է, ինչ հետևանքով վերջիններս, չնայած այդ սահմանափակմանը, իրենց ասելիքը կարողանում են արտահայտել առողջանության միջոցով: Այս կերպ առողջանության գործոնը ավելի է կարևորվում խոսքային գործունեության այս ձևում՝ ի տարբերություն երկխոսության:

Խոսողները հաստատական են և իրենց տեսակետում համոզված, ինչն արտահայտվում է խոսքում կարևորագույն հատվածների շեշտադրումով: Մասնակիցները խոսում են դանդաղ և արտահայտում են կշռադատված մտքեր: Ընդհատումները քիչ են:

Բազմախոսություններում մասնակիցների դերերի բաշխման համապարփակ պատկեր հնարավոր է ստանալ թոք-շոուների հնչյունային վերլուծության արդյունքում: Առավել խորացված վերլուծությունը վեր կհանի կոնֆլիկտային կամ համագործակցային հաղորդակցություններում խոսողների օգտագործած ռազմավարություններն ու մարտավարությունները և դրանց հնչյունային կադապարումը, որի շնորհիվ հնարավոր կլինի վերհանել բազմախոսությունների դերային կառուցվածքի ամբողջական պատկերը:

Բազմախոսություններում դերերի կառացվածքային նման սահմանազատումը և վերլուծությունը հնարավորություն կտա առավել մանրակրկիտ ուսումնասիրել քաղաքական բազմախոսությունները՝ լեզվաբանական տեսանկյունից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Bell A. *Language Style as Audience Design*. Language and Society. 13(2): 1984, 145-204.
2. Bell A. *The Language of News Media*. Oxford: Blackwell. 1991.
3. Dynel M. *Not hearing things – Hearer/listener categories in polylogues*. University of Łódź. 2010. Pp. 1-29.
4. Goffman E. “Replies and responses”, *Language in Society* 5: 257- Reprinted in Erving Goffman (1981a) *Forms of Talk*, University of Philadelphia: Pennsylvania Press, 1976, 257-313
http://www.jstor.org/stable/4166887?seq=1#page_scan_tab_contents
5. Goffman E. “Response Cries”, *Language* 54(4): 787-815. Reprinted in Erving Goffman (1981b) *Forms of Talk*, Philadelphia: University of Pennsylvania Press, 1978, 78-123.
6. Круглова С. Полилогическая речь. 1997. Ярославль. Kruglova S. Polilogicheskaja rech'. Jaroslavl'. 1997.
7. Маковецкая М. С. *Роль просодии в реализации взаимодействия участников группового общения*. Автореферат. Москва. 2012. Makoveckaja M. S. Rol' prosodii v realizacii vzaimodejstvija uchastnikov gruppovogo obshhenija. Avtoreferat. Moskva. 2012.
8. Науменко М. Г. *Трилог как структурно-семантическое и коммуникативное единство (на материале английского и русского языков)*. Автореферат. Ростов-на-Дону. 2012. Naumenko M. G. Trilog kak strukturno-semanticheskoe i kommunikativnoe edinstvo (na materiale anglijskogo i russkogo jazykov). Avtoreferat. Rostov-na-Donu. 2012.
9. Сейранян М. Ю. *Конфликтный политический дискурс и его просодическая реализация (на материале политических дебатов в парламенте Великобритании)*. Автореферат. Москва. 2016. Sejranyan M. Ju. Konfliktnyj politicheskij diskurs i ego prosodicheskaja realizacija (na materiale politicheskix debatov v parlamente Velikobritanii). Avtoreferat. Moskva. 2016.
10. Читахова Л. *Трилог как форма общения коммуникантов в современном французском языке*. Москва. 2001. Chitahova L. Trilog kak forma obshhenija kommunikantov v sovremennom francuzskom jazyke. Moskva. 2001.

11. Яковлева Э. Полилог – третья форма речи? Известия высших учебных заведений. Поволжский регион. Гуманитарные науки. Филология. УДК 803.0.853, 2007. стр. 82-89. Jakovleva Je. Polilog – tret'ja forma rechi? Izvestija vysshih uchebnyh zavedenij. Povolzhskij region. Gumanitarnye nauki. Filologija. UDK 803.0.853, 2007.str. 82-89.
12. Яковлева Э. Полилог как новый объект лингвистики. Лингвистическая полифония. Ред. Потапова. Языки славянских культур. Москва. 2007. Jakovleva Je. Polilog kak novyj ob#ekt lingvistiki. Lingvisticheskaja polifonija. Red. Potapova. Jazyki slavjanskih kul'tur. Moskva. 2007.
13. Яковлева Э. Б. Специфика немецкой полилогической речи. Монография. Москва. МГЛУ. 2004. Jakovleva Je. B. Specifika nemeckoj polilogicheskoy rechi. Monografija. Moskva. MGLU. 2004.

МАНАН АГАБЕКЯН - О РОЛЕВОЙ СТРУКТУРЕ ПОЛИЛОГА

Ключевые слова: полилог, роли участников, лидер, интерпретатор, конфликтные полилоги, кооперативные полилоги

Статья посвящена проблеме распределения ролей участников полилога. Рассматриваются основные подходы к распределению ролей в данной форме речевого взаимодействия, основываясь на психологические типы коммуникантов, характер взаимодействия, коммуникативные стратегии и тактики, конфликтный и кооперативный типы коммуникации. Также предпринята попытка дать более дифференцированную модель ролевой структуры полилога, основываясь на предварительный автосегментный анализ британских социально-политических ток-шоу.

MANAN AGHABEKYAN- ON THE PROBLEM OF ROLE STRUCTURE IN POLYLOGUES

Keywords: polylogues, participants' roles, leader, interpreter, conflict polylogues, cooperative polylogues

The article addresses the problem of participants' roles in polylogues. The distinction of roles in polylogues is determined by the participants' psychological types, nature of interaction, communicative strategies and tactics, cooperation and conflict. The article considers various approaches to the problem suggesting a more differentiated model of roles as observed in socio-political British talk shows, based on autosegmental analysis.

Ներկայացվել է՝ 13.09.2021

Գրախոսվել է՝ 10.09.2021

Երաշխավորվել է ԲՊՀ Անգլերենի ամբիոնի կողմից՝ 27.10.2021